



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Քաղ. Երևան

31 հոկտեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Խաչատրյանի

Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի

Հ. Նազարյանի

Ուսումնասիրելով Արամ Հակոբյանի անհատական դիմումի ընդունելիության
հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝
Արամ Հակոբյանը 2016թ. հոկտեմբերի 12-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատա-
րան՝ խնդրելով.

«1. ՀՀ Սահմանադրության 1-ին և 4-րդ հոդվածներին, 61-րդ հոդվածի 1-ին
մասի՚, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 81-րդ հոդվածի 1-ին մասին հակասող ճանա-
չել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասը դատա-
կան իրավակիրառ պրակտիկայում դրան տված այնպիսի մեկնաբանությունը, հա-
մաձայն որի՝ անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը չի հանդի-

սանում մինչդաստական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա:

2. ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածին հակասող և անվավել ճանաչել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասը»:

Դիմողը գտնում է, որ որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշմամբ խախտվել է իր՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ Շահմանադրության 63-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքը /արդար նախաքննության իրավունքը՝ որպես լայն իմաստով արդար դատաքննության իրավունքի բաղադրիչ մաս/, Կոնվենցիայի 10-րդ հոդվածով և ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածով երաշխավորված խոսքի և գաղափարների փոխանցման ազատության իրավունքը, Կոնվենցիայի 14-րդ հոդվածով և ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածով երաշխավորված՝ խտրականության անթույլատրելիության սկզբունքը /մեղադրանքն առաջադրվել է քաղաքացիական հայացքների համար/:

Դիմողը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասին տրված այն մեկնաբանությունը, ըստ որի՝ անձին մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը համարվում է այդ իրավադրույթի ուժով դատական կարգով բողոքարկման ոչ ենթակա որոշում, հակասում է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածին, քանի որ նման մեկնաբանության դեպքում չի ապահովվում անձի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը: Նման մեկնաբանության դեպքում խախտվում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածով երաշխավորված՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, որի ապահովման պարտականությունը Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է նույն Կոնվենցիայի 1-ին հոդվածով:

Ըստ դիմողի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասը հակասում է նաև ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասին, քանի որ նման պայմաններում անձը զրկվում է դատարանի մատչելիության իրա-

վունքից, հնարավորություն չի ունենում վիճարկել իր իրավունքները խախտող, սահմանափակող որոշման օրինականությունը:

Դիմողի կարծիքով՝ վիճարկվող դրույթին տրված մեկնաբանությամբ, ըստ որի՝ որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը դուրս է մնում մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկայից, խախտվում է նաև իշխանությունների հավասարակշռման սկզբունքը, քանի որ դատական իշխանությունն այլևս զրկվում է համապատասխան մասով գործադիր իշխանության գործունեության օրինականությունը վերահսկելու հնարավորությունից:

2. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ գործի քննության ընդունումը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

չնայած այն հանգամանքին, որ դիմողի դատողությունները վերաբերում են հիմնականում այն խնդրին, թե արդյո՞ք անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը դատական ստուգման առարկա է հանդիսանում, թե՛ ոչ, և փաստարկներն ուղղված են նրան, որ նշյալ որոշումը քրեադատավարական որոշում է և պետք է ներառվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կարգավորման մեջ, դիմումին կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բողոքաբերի բողոքը մերժվել է այն հիմնավորմամբ, որ բողոքաբերը չի պահպանել բողոքարկվող որոշումը դատախազին բողոքարկելու ընթացակարգը:

Այսպես, բողոքաբեր՝ թիվ 69100615 քրեական գործով մեղադրյալ Ա. Հակոբյանի պաշտպան Լուսինե Հակոբյանի կողմից բողոք է ներկայացվել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան՝ Ա. Հակոբյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին՝ ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ա. Մակինյանի 2015 թվականի ապրիլի 10-ի որոշման դեմ: Ե՛վ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի

դատարանը, և՛ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը դիմողի նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտերում շեշտադրել են այն հանգամանքը, որ դիմողը չի պահպանել նախաքննության մարմնի որոշման բողոքարկման արտադատական կարգը՝ դիմել է դատարան՝ առանց քննիչի որոշումը դատախազին բողոքարկելու, հանգելով այն եզրահանգման, որ տվյալ դեպքում «... չի պահպանվել տվյալ որոշման՝ դատախազին բողոքարկելու քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված կարգը, ինչը ներկայացված բողոքը մերժելու հիմք է»:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2009 թվականի դեկտեմբերի 7-ի ՄԴՈ-844 որոշմամբ ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր է ճանաչել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի՝ «... և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» դրույթը, դատական պրակտիկայում դրան տրված՝ նաև «անգործությանը» վերագրվող բովանդակության մասով, որով գործնականում նույն հոդվածի 2-րդ մասի վրա տարածելով 1-ին մասում նախատեսված պայմանն ու նման մեկնաբանությամբ դիմողների նկատմամբ կիրառելով հոդվածի 1-ին մասը՝ սահմանափակվել են անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքները:

ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշման պատճառաբանական մասում արձանագրել է, որ մինչդասական վարույթում օրենսդիրը դատարանին լիազորել է քննելու ոչ միայն քրեական վարույթ իրականացնող իրավասու մարմինների ու պաշտոնատար անձանց որոշումների և գործողությունների օրինականության, այլև՝ **անգործության** վերաբերյալ բողոքները, իսկ՝ «... և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» պայմանը բացառապես վերաբերում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումներին ու գործողություններին, հետևաբար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորման շրջանակներում չէր կարող վերագրվել նաև հիշյալ մարմինների անգործությանը: Մինչդեռ գործնականում դատական պրակտիկան ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի առնչությամբ «գործողություն» եզրույթը հավասարապես վերագրել է նաև անգործությանը:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն ընդգծել է, որ օրենսդիրը կարող է, մի կողմից, գործողությունների և որոշումների, մյուս կողմից՝ անգործության համար սահմանել դրանց բողոքարկման տարբեր ընթացակարգեր: Ընդ որում, Սահմանադրական դատարանն իր որոշման 8-րդ կետում հստակ նշել է, որ դատարան դիմելու կարգը, ի թիվս դատարանի դիմելու այլ պայմանների, կարող է իրավաչափորեն ներառել նաև օրենքով սահմանված՝ իրավունքների պաշտպանության արտադատարանական միջոցն սպառելու պայման:

Սահմանադրական դատարանի նշյալ որոշման վերլուծությունը վկայում է, որ վիճարկվող դրույթը ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր է ճանաչվել միայն **անգործության** մասով, իսկ գործողությունների և որոշումների դատական կարգով բողոքարկման համար արտադատարանական պաշտպանության միջոցի սպառման պահանջը համարվել է իրավաչափ:

Սույն գործի դատավարական նախապատմությունը վկայում է, որ իրավակիրառական պրակտիկան զարգացել է ՀՀ սահմանադրական դատարանի նշյալ որոշման պահանջներին համապատասխան:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կետով և 69-րդ հոդվածի 7-րդ մասով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Արամ Հակոբյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝